

և ցորեկը հաւասար 12 ժամ. և աս կ'ըսուի Դարնանային գիշերահաւասար. որովհետեւ նոյն օրը գարնանամուտ է. անկէ ինչուան որ յունիսի 21<sup>ին</sup> խեցգետին մտնէ՝ օրերը աւելի կ'երկըննան : Հունիսի 21<sup>ին</sup> ամառնամուտ է, և արել ալ կը սկըսի վար իջնալ, որով օրերը կը կարձըննան : Անպատեմբերի 22<sup>ին</sup> կը մտնէ կշիռ աստեղատունը, և երկրորդ անգամ գիշերահաւասար կ'ըլլայ, որ Աշնանային կ'ըսուի, որովհետեւ ան օրը աշուն կը մտնենք : Ինկէ վերջը կը շարունակուի օրերուն կարձըննալը ինչուան գեկտեմբերի 21, որ արել այծեղիւր կը մտնէ, և ձմերային արեադարձ կ'ըլլայ . ըսելէ թէ ան օրը ձմեռ կը մըտնենք, արել կը սկըսի բարձրանալ, օրերն ալ կամաց կամաց կ'երկըննան :

Իս համառօտ տեղեկութիւնը տալէն ետեւ՝ կը մնայ որ յաջորդ թերթին մէջ առանձին խօսինք ամէն մէկ կենդանակերպներուն նշանակութեր վրայ . իրաւ որ անոնք բոլոր առասպելեալ ու շնծու պատմութիւններ են, և մեր սրբազան կրօնքին ծանրութեանը չեն վայլեր . բայց քանի որ աս նշանները մեր օրացոյցներուն մէջ կը դորձածենք՝ անոնց նշանակութիւնը դիտնալն ալ ամօթ չէ :

## ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ձ:

Աթէ գու ագուցեր ձիոյ զօրութիւն, և զեցուցեր զնդ պարանոցաւ նորա . արկեր զնովաս սպառագինութիւն, և փառս լանջաց նորա զանդըգնութիւն : Որոսայ ՚ի գաշտի և գափր հատանէ . ելանէ ՚ի գաշտ զօրութեամբ . ՚ի պատահելնեափց արհամարհէ, և ոչ գարձցի յերկաթոյ : Ի վերայ նորա շողան աղեղն և սուսեր, և շարժիւն վահանի և նիզուկի . և բարկութեամբ ապականէ զերկիր . և ոչ հաւասայ մինչև փող հարկանիցի . և իբրև փող հարկանի, նա վաշ վաշ կարգայ . ՚ի հեռաստանէ առնու զնոտ պատերազմի, վազս առնլով և փողելով :

ՅՈՎ.Բ

Որպէս նըժոյդ յազթող մարտից ամենի ՚ի գըժուարին զարդուե զնուցն ամայի . Մեղկ տանուտն հանդոյն ՚ի զեղծ հանդըսական Անսանձ ըզթափ առնու ՚ի վտառս ՚ի գարման, Ըզմայն փողոյ թէ լըսիցէ յեղակարծ, Կամ թէ շողալ տեսցէ ըզայը սուսերաց . Անդր առ ժամայն խըսրանցելով կայ յառի, Հուր տենչանացն ՚ի ռազմի լանջուն վառի Քաջամարտիկ տանել ՚ի նուս վերելեակ, Դըղնդելով գոռալ ՚ի խուն գըժընդակ, Այսպէս զարթեաւ յանկարծ ընդուստ պարմանին Այն ինչ հարան յաջորդն նըշոյթ պողպատին :

ԹԱՍՍՈՑ

ՈՒԱՐԴՈՒՄ շատ մեծ պարծանք է որ կրցեր է աս խրոխտ ու սրտոտ կենդանին նուածել ու իր կամացը հնազանդեցընել . անանկ որ պատերազմի մէջ իրեն թէ քաշած վտանգներուն և թէ փառաւառոր յաջթութիւններուն անիկայ ալ մասնակից կ'ըլլայ . իր տիրոջը պէս ինքն ալ անվախ է . կը տեսնէ վտանգները ու համարձակ մէջը կը մտնէ . զէնքի ձայններուն կը վարժի, մանաւանդ թէ ան ձայններով շատ ալ կը զուարձանայ . որսի ատեն, հանդէսներու, ձիընթացներու մէջ կրակ կը ցատքէ աչուըներէն : Որչափ որ հլուէ մարդուս, այնչափ ալ սրտոտ է . բայց կիրք ելած ատենն ալ չափը չանցըներ, ինքը զինքը ուղած ատենը կը բռնէ . զինքը կառավարողին ոչ միայն կը հնազանդի, հապա կարծես թէ անոր ակնարկութենէն կը հասկընայ ու կամքը կը կատարէ . յարձըկիլ պէտք է նէ կը յարձըկի, կենալու է նէ կը կենայ, վերջապէս իր տիրոջը կամքէն դուրս չելլեր, ու ինչուան իր կեանքը կը դնէ անոր վրայ :

Ի՞սա այսպիսի բնաւորութիւնն կ'ունենայ ան ձին որ կրթուած է, և պրզտիկութենէ սկսած է մարդուս ծառայել . ան ատեն կը սկսի կրթուիլ երբոր իր ազատութիւնը կը կորսընցընէ :

Որովհետեւ Եւրոպայի ամէն կողմերն ալ հիմա մարդաբնակ է, անոր համար հոն վայրի ձի չգտնուիր :

Իս կենդանին բնութեամբ հեղէ, ու խիստ գիւրաւ կ'ընտանենայ մարդուս հետ . ուստի ոչ երբէք տնէն կ'ել-

լե անտառները կամ լեռները փախչելու . ընդհակառակն թէ որ դիպուածով գուրս տեղ մնացած ըլլայ , նորէն կը դառնայ իրեն բնակարանը , թէ պէտ և կերակուրը խեղջ ըլլայ ու ամէն օր նոյն կերակուրը ուտէ , ան ալ չափով :

Դիուն բնաւորութեան կատարելութիւնը բոլորովին մարդուս տուած կը թութենէն է . մարդս ալ ուրիշ ամէն կենդանիներէն աւելի ասոր կը թութեանը վրայ հոգ կը տանի . բայց աշխատանքին պտուղը ուզածէն ալ աւելի կը վայելէ :

Դիուն տեսքը մէկալ ամէն կենդանիներէն վեհ ու աղուոր է . հասակին մեծութենէն զատ՝ անդամներն ալ շատ համեմատ են . իրմէ մեծ ու իրմէ պղտիկ կենդանիներուն հետ բազդատելու ըլլաս նէ , իշուն ձեւ տգեղ կը տեմնես , առիւծին գլուխը մեծ , եզան ոտւըները՝ մարմնոյն մեծութեանը նայելով բարակ ու կարծ , ուղտին տեսքը անշնորհք ու դանդաղ , ոնդեղ ջիւրին ու փղին ձեւ անձոռնի : Ձին գլուխը վեր տնկած ատենը կարծես թէ չորքոտանեաց կարգէն դուրս կ'ելլէ , ու մարդուս երեսը կընայի , աչուըները վառվըտուն ու խիստ բաց են , ականջները վայելուչ ու չափաւոր , գըլուին ու վիզը աղուոր բաշով ծածկած , պոչը թանձր ու երկայն : Իրաւ է որ առիւծին պէս պոչը չկրնար վեր բըռնել , բայց կրնայ դէպ'ի երկու կողմը շարժել անձերը վարնտելու համար . վասն զի թէպէտ կաշին խիստ հաստ ու մազոտ է , բայց սաստիկ ալ ըզգայուն է :

Դիու մը բնաւորութիւնը ականջներուն շարժմունքէն բաւական կ'իմացուի . քալելու ատենը լաւ ձին ականջները դէպ'ի առջե կը տնկէ . յոգնած ձին ականջները կը կախէ . սրդողկոտն ու չարասիրտը անդադար ականջներուն մէկը առջե՝ մէկալը ետև կը տանի : Ո՞ր և իցէ ձի ուսկից որ ձայն մը լսէ՝ ականջները դէպ'ի ան դին կը դարձընէ . թէ որ ուսին

կամ գաւակին զարնես , ականջները ետև կը դարձընէ :

Հարկաւոր բաներէն մէկն է ձիուն տարիքը Ճանճնալը : Ինդհանրապէս ձիուն տարիքը իրեն ակռաներէն կը Ճանցուի : Վառասոււն ակռայ ունի ձին , այսինքն քսանըզորս աղօրիք , չորս սկունդ ակռաներ , տասուերկու հատ առջեի ակռաներ . մատակները սկունդ ակռայ չունին . ունենան նէ ալ՝ խիստ կարծ են . աղօրիքներէն տարիքը չի մացուիր , հապա մէյմը առջեիններէն , մէյմըն ալ սկունդ ակռաներէն : Խնչուան տասուիրեք՝ տասնըզորս տարին դժուար կ'իմացուի տարիքը . բայց ան ատենէն յօնքին մէկ քանի մազերը կը սկսին Ճերմըկնալ : Երբեմ կը Ճանցուի նաև քիմքին խուռոցներէն , որ քանի որ ձին Ճերանայ՝ խուռոցներն ալ կը կորսուին :

Երկու տարուան կամ երկուք ու կէս տարուան կրնայ ձին ծնանիլ , բայց ինչուան չորս կամ չորս ու կէս տարուան չըլլայ՝ լաւ քուռակ քերեր : Փորձուած բան է որ ձիերը ցեղ կը քաշեն , ու իրենց թէ լաւ և թէ գէշ բնաւորութիւնները քուռակներուն ալ կ'անցընեն :

Կ'ս ալ դիտուած է որ ձիուն բնակութիւնը երեսը չոր երկիր ըլլայ , ձին ալ զգաստ , վազուկ ու ուժով կ'ըլլայ , ոտուըները ջղոտ , ու անոնց կոշտերը պինտ . իսկ ջրոտ տեղուանք ու խիստ պարարտ արօտներու մէջ՝ գլուխը խոշոր , ու մարմինը գանդաղ կ'ըլլայ , ուրունքները հաստ , կոշտերը տգեղ , ու ոտուըները տափակ : Կ'ս ամէն տարբերութիւնները կլիմայէն ու կերակուրէն կ'ըլլան :

Դիուն շատ ապրիլը իրեն մեծնալուն համեմատ է . երբոր ձի մը չորս տարուան մէջ աձումը կ'առնէ , կըրնայ ինչուան 25 կամ 30 տարի ապրիլ :

Հին ատենէն պ'ի վեր խիստ անուանի են Հայաստանի ձիերը , և տաճկերէն Քոհեյլան ըսուածներուն ընտիրները Հայաստանէն կ'ելլեն : Կ'սոնք քիչ մը պղտիկ են , ու Կ'մարիայի



**Անդղեայի Հիեր :**

ա Անդղեայի Ռուբո գաւառովն պղղիկ ձին : — բ Ըեթլէնտ գաւառովն ձին : — ս Լծելու ձի : — դ Որսի ձի : — է Զիընթացի յարմար ձի :

ձիերուն տեսքը չունին, բայց անոնցմէ շատ աւելի վազուկ ու դիմացկուն են :

Խիստ հռչակաւոր են Աքաբացւոց ձիերը իրենց տեսքին և ուժին կողմանէ :

Ապանիայի ձիերն ալխիստ անուանի են . տեսքերնին գեղեցիկ ու ոտուընին ցած է . վազելու ատեն խաղուն, արագաշարժ, վառվըռուն ու կրակոտ. գոյներնին սովորաբար սեկակ կ'ըլլայ, բայց ամէն գունով ալ կը գտնուի : Ամէն ձիերէն աւելի ասոնք յարմար են պատերազմի, հանդիսի, ու ձիընթացի:

Անգղիայի ձին շատ կընմանի Աքաբիայի ու Հայաստանի ձիերուն . ուժով, դիմացկուն, յանդուգն ու կրտրիչէ, որսի ու ձիընթացի շատ յարմար:

Ատենով Խտալիայի ձիերն ալաւելի գեղեցիկ են եղեր . բայց հիմա անոնց ցեղը աւրուած է կ'ըսեն, թէպէտ և գեռ կը գտնուին գեղեցիկ ձիեր՝ Արփոլի երկրին մէջ :

Տանիմարքայի ձիերը մեծ ու գեղեցիկ են, և առջիններէն աւելի յարգի կը սեպուին կառքի լծելու համար :

Գերմանիայի ձիերն ալ գեղեցիկ են . բայց ընդհանրապէս թանձրամարմին ու ծանր են : Ինդ հակառակն Ամառուստանի ու Աֆրանսիլվանիայի ձիերը շատ թեթև ու արագաշարժ են : Ասոնք կրթողները սովորաբար անտեղացի հայ կտրիճներն են, որ աս կողմանէ ալ մեծ անուն ունին Խըրոպացւոց մէջ :

Հոլանդայի ձիերը, մանաւանդ Ֆրիզիա գաւառինները կառքի լծելու խիստ յարմար են :

Գաղղիա ամէն տեսակ ձի կը գըտնուի, բայց աղէկները քիչ են :

Տաճիկ ձի կամ Աքաբի ձի ըսուածը Աքաբիայի անապատին վայրի ձիերէն առաջ կուգայ, և Ասիայի ու Աֆրիկէի մէջ խիստ շատ կը գտնուի : Ասիայ ան աստիճան վազուկ է որ ջայլամին ալ կ'անցնի :

Աքաբացի չկայ որ ձի չունենայ, թէպէտ և խիստ աղքատ ըլլայ : Ասոնք իրենց ձիերուն ցեղը աղէկ կը պահեն,

և անոնց սերունդը ու ազգաբանութիւնը գիտեն, ու կարգաւ կը համըն: Աքաբացիք վրանաբնակ ըլլալով, իրենց ձիերովը նոյն վրանին մէջ կը բընակին մէկտեղ . մատակներուն ամենեին չեն զարներ . անոնց հետ քաղցրութեամբ կը վարուին ու ստէպ կը խօսին, և վրանին մեծ հոգ կը տանին, և ինչուան որ հարկ ըրլլայ չեն զարներ . անոր համար ալ՝ ասպանգակին ծայրովը կողին դպածնուն պէս սաստիկ արագութեամբ կը վազեն, և դիմացնին ինչ որ հանդիպի՝ ցանկ կամ փոս, վրայէն կը ցատքեն անդին կ'անցնին :

Այս Աքաբի ձիերը միջակ մեծութիւն ունին, աւելի երկայնի վրայ ունի համար են քան թէ գէր : Աքաբի ձին ամէն ատեն աշխարհիս մէջ առջի ձին սեպուած է՝ իրեն թէ լաւութեանը համար, և թէ գեղեցիկութեանը :

Չին հինգ տեսակ խխնջալ ունի իրարմէ տարբեր, որ այլ և այլ կիրքերուն նշան են . ինչպէս ուրախութեան, սիրոյ, բարկութեան, վախի ու ցաւի : Փորձուած է որ ան ձիերն որ ստէպ կը խխնջան, մանաւանդ ուրախութեան ատեն, անոնք շատ լաւ ձիեր են : Չին ուշ կը մոռնայ իրեն եղած չարիքը, և աւելի դիւրաւ կը բարկանայ՝ քան թէ եղը : Վիչ կը քնանայ ձին . շատ շատ՝ իրեք կամ չորս ժամ . երբոր խիստ յոզնած ըլլայ, կերակուրէն ետքը նորէն կը քնանայ :

Այլ և այլ երկիրներ որովհետև զանազան բաներու կը գործածուին ձիերը, անոր համար իրենց կերակուրն ալ տարբեր է : Աքաբացիք ու Պէրպէրիստանցիք որսի գործածուած ձիերուն խիստ քիչ անդամ խոտ ու գարի կը կեր ցընեն . հապա ընդհանրապէս արմաւ, և ուղտի կաթ՝ ամէն առաւաօտ ու իրիկուն :

Պարսկաստան ձիերը գիշեր ցորեկ գաշտերու մէջ բաց տեղ կը թողուն . բայց օդին վնասակարութենէն պաշտաննելու համար վրանին աղէկ մը կը ծած կեն, մանաւանդ ձմեռը :

Պարսիկները ձիուն տակը չոր խոտ  
դնելու տեղը, աւազն ու հողը լաւ մը  
կը չորցընեն ու անոր ոտքին տակը կը  
փռեն. ձին անոր վրայ շատ հանգիստ  
կը պառկի ու կը քնանայ :

Վցէկ ձիերը ցուրտ երկիրներու մէջ  
ալ կը գտնուին , միայն թէ խոնաւ  
չըլլայ . Խալանտայի մէջ որ խիստ ցուրտ  
երկիր է , ձիերուն չորցած ծուկ կու-  
տան , և սակայն խիստ ուժով են , թէ-  
պէտ և պղտիկ . ան աստիճան պղտիկ-  
ներ կը գտնուին , որ մանր տղաք միայն  
կրնան վրանին հեծնաւ :

Ուքրանիայի երկիրը, ու Տոն գե-  
տին քովերը, որ Պուճագ թաթար  
ալ կ'ըսուի, ձիերը դաշտերու մէջ ար-  
ձակ կըքալեն՝ չորս հինգ հարիւրը  
մէկտեղ. երկիրը ձիւնով ալ ծած-  
կուած ըլլայնէ, իրենք առջևի ոտուր-  
ներով ձիւնը մէկդի կ'առնեն ու տակի  
խոտերը կ'ուտեն : Խցկու իրեք ձիա-  
ւոր ասխումբերը կը հովուեն, և միան  
գամայն պահպանութիւն կ'ընեն ա-  
նոնց : Ամէն խումբի մէջ մէյմէկ գըլ-  
խաւոր ձի կայ որ անոնց կ'առաջնորդէ,  
կարգ կը դնէ, ու քալելու կամ կենա-  
լու նշան կուտայ . երբոր աւազակ կամ  
գայլ յարձըկի վրանին, մէկէն զիրենք  
կարգի կը դնէ : Ի՞ն գլխաւորը խիստ  
արթուն ու աշխոյժ է . ստէպիր խում-  
բին չորս դին կը պարտի . թէ որ ձիուն  
մէկը իր կարգէն դուրս ելլէ, կամ ե-  
տե մնայ, մէկէն քովը կը վագէ, ուսին  
զարնելով նորէն իր կարգը կըքերէ :  
Պիխաւորը չորս հինգ տարի աշխա-  
տելէն ետքը երբոր կը սկսի ուժէ իյ-  
նալ, ան ատեն ուրիշ փառասէր ձի մը  
իր ուժին վրայ վստահացած խումբին  
մէջէն կ'ելլէ, ու ծեր գլխաւորին հետ  
կը ծեծկուի . թէ որ ինքը յաղթէ,  
մէկաներուն գլուխ կը կենայ, ու զա-  
նոնք իրեն կը հնագանդեգրնէ :

Փինլանտիայի մէջ մայիս ամսուն  
երբոր ձիւները կը սկսին հալիլ, ձիե-  
րը իրենց տերերուն քովլէն կ'ելլէն,  
ու անտառներուն մէջ մասնաւոր տեղ  
մը կը ժողվուին, իբր թէ առաջուց  
մէկմէկու հետ խօսք դրած ըլլային

Հաւաքուելու : Հօն ամէնքը խումբ  
խումբ կը բաժնուին , և աս խումբերը  
իրարու հետ ամեննեին չեն խառնուիր .  
ամէն խումբ արծելու համար անտա-  
ռին մէկ կողմը իրեն կ'առնէ , և ան  
երկրին կտորը իրեն կը սեպհականէ ,  
ու մէկմէկու բաժնին մէջ չեն երթար :  
Երբոր իրենց արատը հատնի , ան տե-  
ղը կը թողուն՝ ուրիշ տեղ կ'երթան ,  
և հօն ալնոյն կարգը կը պահեն :

Եմբրիկայի Ա իրձինսիա ըսուած նա  
հանգին մէջ վայրի ձիեր ալ կան . ա-  
սոնք այնպէս կատաղի կ'ըլլան որ քո-  
վերնին մարդ չկրնար մօտենալ . թէ  
որ մէկը կարենայ ասոնք բռնել ու  
սանձել իրենը կ'ըլլան : Ա այրի ձին  
շատ կը գտնուի նաև թաւթ'արստան ,  
մանաւանդ Կասպից ծովէն անդին .  
Երկըրցիք աս ձիերը բռնելու համար՝  
որսի թռչուններ կը բանեցընեն՝ որ  
մասնաւոր աս բանիս համար ալ կը  
վարժեցընեն . աս թռչունները կ'եր-  
թան ձիերուն դլուին ու վիզու այնչափ  
կը կտցեն որ ձիերը կը յոգնին անոնց  
հետ կուուրտելէն ու դիւրաւ ձեռք  
կ'իյնան :

## ՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՃԱՏՎԱՐՈՒԹԵՐՆ

የመጀመሪያ ስምምነት በተከታታይ እና የሚከተሉበትን

ՏԵԱԿԱՆ ԹՆԹԵՍՈւԹԵԱՆ ՄԵջ Հարկաւոր բաներէն մէկն ալ ձրագ շինելն ըլլալով՝ ամէն օր նոր գիւտերով՝ կը կատարելագործուի աս արհեստոր։

Ամեն մարդ գիտէ թէ Ճրագին նիւ  
թէ կենդանեաց հալեցուցած ու մաք-  
րած ճարախն է որ ճբակու ալ կ'ըսուի':  
Հոս դնենք թէ Ճրագուն ինչպէս զոր-  
ծածելու է, և թէ աղէկ Ճրագ շինե-  
լու համար ինչ գիւտեր գտնուած են:  
Որպէս զի Ճրագը աղէկ ըլլալ՝ պէտք